Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

C A 32-K / 283

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!*

2802-10

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ԿԿԲ ՌԱԶՄԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՆԵՎՐԱՆԵՐՈՒՄ

ՊՕԻԿԿԱ-ի հրատարակություն

1931

355.42
Կ-76

355.42
Կ-76

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. տպ., Եր. „Զարյա Վոստոկա"-ի, Թումթ. 3
Պատվեր 2197. Գլավլիտ 1577. Քանակ 1500.

## Ընկերներ!

Այս տարի Կարմիր բանակի մանյովրներն անց են կացվում միջազգային բարդ պայմաններում:

Կապիտալիստական աշխարհը տնտեսական ամենախոր ճգնաժամ է ապրում: Արտադրությունը կրճատվում է, առևտուրն ընկնում: 35 միլիոն գործազուրկներ չեն կարողանում իրենց աշխատանքը գործադրել: Միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ քայքայվում են:

Այդ նույն ժամանակ Խորհրդային Միության մեջ չտեսնված արագությամբ աճում է ժողովրդական տնտեսությունը: Հաղթականորեն կառուցվում է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը: Հնգամյակը կկատարվի 4, իսկ մի քանի ճյուղերում՝ 3 տարում: Խորհրդային Միությունը դառնում է մետաղագործության երկիր, մեքենայացման երկիր: Արագորեն վերափոխվում է գյուղական տնտեսությունը: Կոլեկտիվացումով ընդգրկված է գյուղացիական տնտեսությունների 57 տոկոսից ավելին: Խորհրդային Միության մեջ գործազրկություն չկա:

Ճգնաժամի հետևանքով սրվել է դասակարգային պայքարը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, հեղափոխական շարժման նոր վերելք է առաջանում: Աճում են միջազգային պրոլետարական հեղափոխության ուժերը:

Կապիտալիստները ճգնաժամից և առաջացող հեղափոխական փոթորկից ելքը պատերազմի մեջ են գտնում և ուժեղ կերպով պատրաստվում են դրան: Բուրժուազիան պատերազմով է ուզում վճռել իր վեճերը գաղութների և սպառման շուկանե-



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

23 MAY 2013
41777

րի համար: Պատերազմը պիտի ազատի ապրանքները հսկայական ավելցուկից: Պատերազմը աշխատավորների ուշադրությունը յետ պիտի դարձնի հեղափոխությունից:

Սակայն առաջին հերթին բուրժուազիան պատերազմ է պատրաստում Խորհրդային Միության դեմ: Բուրժուազիան ցանկանում է վոչնչացնել Խորհրդային Միությունը, վորովհետև նա հանդիսանում է համաշխարհային հեղափոխության հենարանը, իսկ նրա արագ աճը անսովոր պարզությամբ մերկացնում է կապիտալիզմի ամբողջ նեխվածությունը: Ամբողջ աշխարհի բուրժուազիան ցանկանում է խորտակել Խորհրդային յերկիրը, դառնալ մեր յերկրի տերը, դարձնել նրան իր գաղութը և այդպիսով մեղմացնել իր վեճերը սպառման շուկաների համար:

Կապիտալիստները մտադիր եյին Խորհրդային Միության դեմ պատերազմ սկսել 1929–1930 թվին: Պատերազմի հրդեհը կասեցվեց նրա համար, վոր կապիտալիստների պլանները մերկացվել եյին. Խորհրդային Միության պահապան է կանգնած միջազգային պրոլետարիատը, վորովհետև Խորհրդային Միությունն անշեղորեն խաղաղության քաղաքականություն է տանում:

Կապիտալիստների պլանները բացված են, բայց պատերազմը նոր ույժով է պատրաստվում: Յերբեք այդ նախապատրաստությունն այնպես կազմակերպված, համառ և լայն կերպով չի տարվել, ինչպես այժմ: Ստեղծվում են կապիտալիստական պետությունների ռազմական միությունները: Աճում է ռազմական արդյունաբերությունը, վորը վոչ մի ճգնաժամ չգիտե: Բոլոր բանվորները զինվում են տեխնիկայով:

Ներկայումս բուրժուազիան խորհրդային Միության դեմ մեծ համաշխարհային պատերազմ է պատրաստում: Ֆրանսիայի հետ միասին—վորպես հա-



ՀՍՍՌ-Арм ССР
6/398-67

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

կախորհրդային պատերազմի նախապատրաստության գլխավոր ղեկավար վերջին ժամանակներս առաջին տեղն են քաշվում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները: Վոտքի յե կանգնում ամբողջ կապիտալիստական աշխարհը՝ պրոլետարական պետությունը վոչնչացնելու համար: Ուժեղ կերպով հարձակումն է պատրաստվում Անդրկովկասի վրա, դեպի վորտեղ իմպերիալիստներին քաշում է նավթը, բամբակը, մարգանեցը, անտառները:

Մասնակցելով մանյովրներին, յուրաքանչյուր կարմիր-բանակային պիտի միշտ հաստատ հիշի—

Կապիտալիստները նորից պատերազմի սուր են բարձրացնում խորհրդային Միության դեմ: Պատերազմն անմիջական վտանգ է դարձել: Հարկավոր է միշտ պատրաստ լինել կռվի բռնվելու և հաղթելու:

1931 թվի—հնգամյակի յերրորդ վճռական տարվա մանյովրները անցկացնել հարվածայնորեն, մարտականորեն:

Կապիտալիստների կողմից հակախորհրդային պատերազմ պատրաստելուն պատասխանել Կովկասյան Կարմրադրոշ Բանակի մարտական ուժի նոր բարձրացումով—մանյովրների լավ անցկացումով:

## ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏԸ

Մանյովրները—մարտական քննություն են, զորքերի մարտական պատրաստակամության բազմակողմանի ստուգումն: Մանյովրները դրա հետ միասին քաղաքական և տակտիկական ուսմունքի ամենաբարձր աստիճանն են: Մանյովրները հարկավոր է անցկացնել լայն ծավալված սոցիալիստական մրցակցության և հարվածայնության նշանի տակ, և հենց դրանով եվ ապահովել մանյովրների բոլոր խնդիրների լավագույն կատարումը: Յուրաքանչյուր կարմիր-բանակային – սոցմրցակցության ակտիվ մասնակիցն է:

Մանյովրների վոչ մի ետապ և ընթացք, մանյովրների վոչ մի որ առանց սոցմրցակցության:

Մրցակցել հրամանատարի ցույց տված կոնկրետ հարցերի շուրջը:

Իմանալ կնքված պայմանագրերի հետևանքները:

Սոցմրցակցության կարգով ոգնություն ցույց տալ վորևէ բանում յետ մնացող ընկերներին:

Հարկավոր է կարմիր-բանակայինի վոգևորությունը մարտական նախապատրաստության լավագույն հաջողությունների կոնկրետ գործեր դարձնել:

Կովկասյան Կարմրադրոշ Բանակը 1931 թվին ուսումնքն անցկացրել մրցելով Բաղվի բանվորների հետ:

Մանյովրների ժամանակ ապացուցիր, վոր դու կատարել ես քո պարտավորությունները Բաղվի բանվորների առջև, վորոնք նավթային հնգամյակը կատարել են 2½ տարում:

## ԱՄՐԱՑՐՈՒ ԿԱՊԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Մանյովրների ժամանակ Կարմիր բանակը սերտորեն շփվում է բնակչության հետ: Դրա համար էլ անհրաժեշտ է մանյովրներն ոգտագործել կապը քաղաքի և գյուղի աշխատավորների հետ ամրացնելու համար: Հնարավորության չափ ոգնել սոցիալիստական շինարարությանը:

Յուրաքանչյուր մարտիկից պահանջվում է.—

Պարզաբանել սոցիալիստական շինարարության նվաճումները հնգամյակի յերրորդ վճռական տարում և մոտակա կարևորագույն խնդիրները:

Ոգնել անցկացնելու հերթական կամպանիաները, ինչպես որինակ՝ հացամթերումների, բերքահավաքի, ցանքի, «հնգամյակի 3-րդ վճռական տարվա փոխառության» տարածման:

Ոգնել կոլխոզների ամրապնդմանը, նրանց մեջ նոր անդամներ գրավելուն:



Իմացիր, վոր դասակարգային թշնամիները— կուլակները, մենշևիկները, դաշնակները և մուսավաթիստները կձգնեն հակահեղափոխական ագիտացիա տանել մանյովրների ռայոնների բնակչության միջև, պախարակել կարմիր բանակը, սերմանել ազգային ատելություն: Ռազմիկը պարտավոր է—մերկացնել կուլակների ու տերտերների հակահեղափոխական ագիտացիան: Վճռականորեն պայքարել մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների ագիտացիայի դեմ, մերկացնելով դրա դասակարգային էությունը: Հարկավոր է ոգնել ռազմական աշխատանքին գյուղում, պատմել պատերազմի վտանգի և աշխատավորների անելիքների մասին:

Յուրաքանչյուր կարմիր-բանակային պարտավոր է դասակարգային գիտակցության, քաղաքական ակտիվության, հեղափոխական կարգապահության օրինակ ցույց տալ, հիշելով, վոր ըստ առանձին ռազմիկի դատում են ամբողջ զորամասի, ամբողջ կարմիր բանակի մասին:

Արդարացրու աշխարհի վրա առաջին բանվորագյուղացիական Կարմիր բանակի կարմիր-բանակայինի բարձր և պատվավոր կոչումը:

Հոգածություն ցույց տուր թե կոլխոզնիկի և թե անհատականի տնտեսությանը, յեղբայրական ոգնություն ցույց տուր այն ընտանիքի անդամներին, վորտեղ դու տեղավորված կլինես:

Չփչացնես բանջարանոցները, այգիները, չարածացնես արտերը, առանց թույլտվության չոգտվես տնտեսական կամ ընտանեկան գործածության վոչ մի առարկայից, ժամանակավոր ոգտագործման համար տարած իրը վերադարձրու առանց փչացնելու:

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՑԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մանյովրների ռայոններում ապրում են վրացիներ, ոսեր, հայեր, ռուսներ:

Յուրաքանչյուր կարմիր—բանակային պիտի ցույց տա, որ ինքը ինտերնացիոնալ կարմիր բանակի մարտիկ է: Շփումը մանյովրների ռայոնի աշխատավոր բնակչության հետ՝ Կովկասյան Կարմրադրոշ բանակի մասսայական ինտերնացիոնալ կապ պիտի դառնա ռայոնի բազմազգի բնակչության հետ:

Յուրաքանչյուր ռազմիկի խնդիրն է—բացատրել կուսակցության և խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը, մերկացնել մեծապետականությունը և տեղական նացիոնալիզմը, ում կողմից էլ որ նա դրսեվորվելու լինի, յեղբայրական վերաբերմունք ցույց տալ բոլոր ազգությունների ներկայացուցիչներին, հարգել ազգային սովորությունները և լեզուն:

Մեր շարքերի ամուր ինտերնացիոնալ միաձուլությամբ ցույց տանք Անդրկովկասի աշխատավորներին, որ Կովկասյան Կարմրադրոշ բանակը — լենինյան ազգային քաղաքականության լավագույն արտահայտությունն է հանդիսանում:

Դուրս շպրտենք նացիոնալիզմի ժանգը մեր շարքերից:

Յուրաքանչյուր ռազմիկ լենինյան ինտերնացիոնալիզմի դրոշակակիրն է: Մեծապետականության և տեղական նացիոնալիզմի արտահայտության վոչ մի դեպք չպետք է լինի:

## ՊԱՀՊԱՆԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Դասակարգային թշնամիները — կուլակը, դաշնակը, մենշևիկը, մուսավաթիստը ձգտում են վոչ միայն խախտել Կարմիր բանակի ուժը, այլև լրտեսել կապիտալիստական բանակների ոգտին:

Լավ հիշիր դրա մասին մանյովրների ժամանակ, ամուր պահիր զինվորական գաղտնիքը, պայքարիր զինվորական գաղտնիքի պահպանման համար ընկերոջդ կողմից:



Իմացիր, վոր լրտեսը գործում է ճարպկորեն: Զինվորական թեմաների շուրջը անծանոթ մարդկանց հետ խոսակցության մեջ մի մտիր, զինվորական թեմաների մասին անծանոթ մարդկանց ներկայությամբ մի խոսիր, բանակի և մանյովրների մասին վոչ մի տեղեկություն մի գրի տուն:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՉ ՄԻ ԽԱԽՏՈՒՄ

Մանյովրները յուրաքանչյուր կարմիր—բանակայինից պահանջում են ուժերի հսկայական լարում, արշավի ծանրությունները տանելու դիմացկունություն: Յուրաքանչյուր ռազմիկից պահանջվում է մեծագույն կայունություն և խստագույն կարգապահություն:

Մանյովրների ժամանակ հարկավոր է կարգապահության և դասակարգային գիտակցականության բարձրագույն որինակ ցույց տալ:

Դասակարգային թշնամու փորձերին՝ խախտելու կարմիր բանակի մարտական ուժը—պատասխանիր․ «մանյովրներին – հեղափոխական դիսցիպլինայի վոչ մի խախտում»:

## ՊԱՀՊԱՆԻՐ ՏԵԽՆԻԿԱՆ

Ուսմունքի անցած տարում Կովկասյան Կարմրադրոշ բանակը ուսումնասիրել է ռազմական տեխնիկան, տակտիկան, տիրապետել է ժամանակակից կռվի բարդ ձևերին: Խորհրդային Միության ինդուստրացման արագ աճը Կարմիր բանակին էլ ավելի բարձր տեխնիկա յե ապահովում:

Մանյովրների ժամանակ յուրաքանչյուր ռազմիկի խնդիրն է.—

Ցույց տալ իրեն հանձնված զենքի և ուրիշ տեխնիկայի լավ իմացականություն և դրանց տեղին ոգտագործումն:

Ցույց տալ պատրաստականություն նորագույն տեխնիկան ընդունելու:

Ամենաուշադիր վերաբերմունք ցույց տալ տեխնիկայի խնայողությանը: Վոչ մի կոտրվածք, վոչ մի կորուստ մանյովրների ամբողջ ժամանակ:

Ցույց տալ կռվի ժամանակ կանոնադրությունները գործադրելու կարողություն, հենված ամենալայն նախաձեռնության և ակտիվության վրա, կարողանալ տակտիկորեն, գրագետ կերպով օգտագործելու տեխնիկան զանազան պայմաններում:

Անդրկենտգործկոմը և Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունների Կենտգործկոմները հեղափոխական պարգևներ են սահմանել այն զորամասերի համար, վորոնք ուսմունքի ժամանակ լավագույն հետևանքներ են ցույց տվել: Մանյովրները — վերջնական պատասխանատու ստուգումն է:

Յուրաքանչյուր ռազմիկի պարտքն է բոլշևիկորեն պայքարել նախապատրաստության բոլոր ասպարեզներում լավագույն հաջողությունների հասնելու համար, ցույց տալ այդ հաջողությունները մանյովրների ժամանակ:

Հիշի՛ր. քեզնից է կախված — կստանա՞, արդյոք զորամասը Խորհրդային Անդրկովկասի աշխատավորների պարգևը:

## ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՑՑ ՏՈՒՐ

Ժամանակակից կռվում հրամանատարը շատ բարդ աշխատանք է կատարում: Ողակի հրամանատարը ներկայումս կռվի ժամանակ ավելի մեծ ինքնուրույն վորոշում է ընդունում, քան առաջ:

Վաշտի հրամանատարը չափազանց բարդ մեքենա յե կառավարում: Յուրաքանչյուր կարմիր-բանակայինի հեղափոխական պարտքն է մանյովրների



ժամանակ ամեն կերպ օգնել հրամանատարի աշխատանքներին: Ուշադրությամբ ամենուրեք լսիր հրամանատարին, աշխատիր արագ ըմբռնել խնդիրը:

Հրամանատարից անձամբ ստացած ամեն մի հրամանն ու կարգադրությունը կրկնիր, արագ, ճշտությամբ, վճռականորեն կատարիր:

Հիշիր. յուրաքանչյուր կարմիր-բանակային պարտավոր է ամեն պարագայում իր հրամանատարին վերաբերվել վորպես պետի և ավագ ընկերոջ:

Արշավի, կռվի, հանգստի ժամանակ վոչ մի հակաճառություն, վոչ մի միճարանություն ծառայության պարտականությունները կատարելիս:

## ԻՄԱՑԻՐ ՔՈ ԽՆԴԻՐԸ

Ժամանակակից կռվի հաջողության հիմնական պայմաններից մեկն այն է, վորպեսզի յուրաքանչյուր մարտիկ ըմբռնի խնդիրը, ողակի, դասակի և մինչև անգամ վաշտի խնդիրը: Խնդրի իմանալը ռազմիկի գործողություններին խելացի իմաստ է տալիս, ճիշտ նախաձեռնություն և ակտիվություն է առաջ բերում, պայքարը նպատակի համար ավելի համառ է դարձնում, ռազմիկի պատրաստությունն է բարձրացնում:

Մանյովրների ժամանակ վոչ մի քայլ չանել առանց խնդիրը պարզորոշ ու լավ կերպով իմանալու:

Իմանալով խնդիրը — կատարիր այդ, ինչ էլ վոր լինի, ամբողջ համառությամբ և վճռականությամբ:

## ԱՎԵԼԻ ՄՈՏ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ ԲՋԻՋԻՆ

Յուրաքանչյուր կարմիր-բանակային լավ գիտե կուսակցական և կոմսոմոլի բջիջների դերը մարտական ուսմունքի, քաղաքական դաստիարակության ժամանակ: Կուսակցականները մանյովրների ժամանակ: Կուսակցականները մանյովրների յեն դուրս գալիս «Կոմունիստ և կոմսոմոլիստներին մինչ առաջից, ամենուրեք օրինակելի» լոզունգով:

Մանյովրների ժամանակ բոլոր կարմիր-բանակայիններից պահանջվում է ել ավելի համախմբվել կուսակցական բջիջների շուրջը, կուսակցության գլխավոր գծի շուրջը: Բոլոր վոչ պարզ հարցերի համար դիմիր բջիջին, կուսակցականին: Քո բոլոր աշխատանքների ժամանակ հավասարվիր առաջավոր կուսակցականներին:

Հիշիր, վոր այդպես կռիվների ժամանակ հաղթանակները կոփվելու յեն բոլոր ռազմիկների միաձուլությամբ Կարմիր Բանակի առաջնորդ և կազմակերպիչ լենինյան կոմմունիստական կուսակցության շուրջը:

Մանյովրների հետևանքով յուրաքանչյուր կարմիր-բանակային ռապորտ պիտի տա

— Համաշխարհային պրոլետարիատի հայրենիք՝ Խորհրդային Միության պաշտպանության կռվի համար—պատրաստ եմ:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կռիվը յուրաքանչյուր կարմիր-բանակայինից պահանջում է ուժերի հսկայական լարում: Կռվում համառորեն կարելի յե կռվել միայն լավ իմանալով և պարզելով պայմանները: Դաշտ դուրս գալիս, նույնպես և անցյալ մանյովրների ժամանակ ռազմիկի հիմնական սխալներից մեկը այն է յեղել, վոր թույլ կերպով է անցկացվել կանոնադրության կարևորագույն կետերից մեկը, թե «յուրաքանչյուր մարտիկ պիտի հասկանա իր մանյովրը»: Այստեղ շատ դեպքեր են նկատվել, յերբ կարմիր-բանակայինը վոչ միշտ է հաստատուն կերպով իմացել թե իր յենթաղակի և թե ամբողջ մասի խնդիրը: Դա առաջ է գալիս հետևյալ պատճառներից.

Ռազմիկները վոչ միշտ են պահպանում հասկացած խնդրի, տրված հրամանի կրկնողության կանոնները: Մի յենթաղակից մյուս յենթաղակը կենդանի



հանձնման պրակտիկան (շղթայով) բավարար չափով չէ արմատավորված: Դեպքեր են յեղել, յերբ պահապան մասին զորասյունի գլխավոր մասին խառնված տվյալներ են տվել, փոխանակ «ԹՇՆԱՄԻՆ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Է»—«ԹՇՆԱՄԻՆ ՆԱՀԱՆՋՈՒՄ Է», և հենց դրանով ել խճճվածություն և բարդություն են մըտցրել մարտական կացության մեջ:

Լեռնային պայմաններում շատ դեպքերի կարող ենք հանդիպել, յերբ զորասյունի յենթաղակներն իրարից բաժանված են լեռնաշղթաներով և կապը նրանց միջև շղթայի, սիգնալշչիկների և այլ միջոցներով սովորական յերևույթ է լինելու ու լավ կազմակերպվելու դեպքում դժվարությունների չի հանդիպի:

Յուրաքանչյուր կարմիր-բանակային պետք է հիշի, վոր հրամանի կամ կարգադրության ճիշտ հանձնումից են կախված այդ յենթաղակի գործողությունները:

Յեթե շարքային կարմիր-բանակայինների մոտ խնդիրները ըմբռնելու տեսակետից մի շարք թերություններ են լինում, ապա կարմիր-բանակային տնտեսայինները հաճախ լիակատար անտարբերություն և անուշադրություն են ցույց տալիս իրենց յենթաղակի ռազմական աշխատանքին: Այստեղ մեծ մասամբ այն հարցին, թե ի՞նչ խնդիրներ են տրված վաշտի, հրետանու, եսկադրոնի առջև—լսվում են պատասխաններ — «ՉԵՄ ԿԱՐՈՂ ԻՄԱՆԱԼ»: Այդ չիմացողության դեմ հարկավոր է վճռական պայքար տանել: Յենթաղակի ամբողջ կազմը, վոր մասնակցում է դաշտ դուրս գալուն մանյովրներին, անկախ կատարվող աշխատանքի բնույթից, պարտավոր է իմանալ իր յենթաղակի ռազմական խնդիրները: Միայն իմանալով յենթաղակի ընդհանուր խնդիրը, յուրաքանչյուր ռազմիկ, լինի նա շարքերում թե տնտեսական մասում, կարող է անսխալ կերպով կատարել իր մասնավոր խնդիրը:

Հետևակի ռազմական կանոնադրությունը հատկապես ընդգծում է, թե ռազմական խնդրի կատարման պատասխանատվությունն ընկնում է ինչպես հրամանատարի, այնպես էլ յուրաքանչյուր շարքային ռազմիկի վրա:

Խնդրի իմանալը ռազմիկի գործողություններին իմաստ է տալիս, ճիշտ նախաձեռնություն և ակտիվություն է առաջացնում, պայքարը նպատակի համար ավելի համառ է դարձնում, ռազմիկի նախապատրաստությունը բարձրացնում:

Մանյովրների ժամանակ փոքր մի քայլ չանել առանց պարզորոշ կերպով խնդիրն ըմբռնելու:

Իմանալով խնդիրը—կատարիր այն ինչ էլ վոր լինի, ամբողջ համառությամբ և վճռականությամբ:

Ինչի մասին չգիտես—հարցրու:

## ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԳՈՐԾԱԿՑՈԹՅԱՆ ՄԵՋՆ Ե

Ժամանակակից կռվի մեջ հաջողություն ձեռք է բերվում բոլոր տեսակի զորքերի համաձայնեցրած գործողությունների շնորհիվ: Հետևակը հանդիսանալով զորքերի հիմնական տեսակը, կռվի մեջ կատարում է ամենագլխավոր դերը, վորովհետև միայն հետևակն է ընդունակ ընդհուպ մոտենալ թշնամու և ձեռնամարտի միջոցով կոտրել նրա դիմադրությունը:

Զորքերի մյուս բոլոր տեսակները — հրետանին, զրահա-տանկային մասերը, ավիացիան, քիմիական մասերը և մյուսները ապահովում են հետևակի կողմից նրա ռազմական գործողությունների կատարումը:

Հրետանին յուր կրակով ոգնում է հետևակին՝ վոչնչացնել հակառակորդի կենդանի ույժը, քանդել արհեստական պատվարները, կասեցնել հակառակորդի զրահապատ ուժերը և այլն:



Տանկերը, առանց ճանապարհների շարժվելով կտրտված վայրով, քանդում են հակառակորդի արհեստական պատվարները, ինչպես, որինակ, դիրքերը, փշալարերը, և այլն, և հենց դրանով ոգնում հետևակին՝ կատարելու ռազմական խնդիրը:

Սավառնակներն ոդային հետախուզության միջոցով արագությամբ գտնում են թշնամու տեղը, ուրից հարձակվում նրա վրա, և հակառակորդի սավառնակների հարձակումների դեմ պահակի ծառայություն մատուցում:

Ինժեներական զորքերը զանազանակերպ աշխատանքներ կատարելով — դիրքերն ամրապնդելու, կամուրջներ ու գետերի վրայից անցնելու պատվարներ կառուցելու, ճանապարհները նորոգելու, դիմակավորման համար — նույնպես հեշտացնում են հետևակի գործը՝ ռազմական խնդիրը կատարելու:

Կապի զորքերը ապահովում են հրամանների, կարգադրությունների և տեղեկությունների հաղորդումը ժամանակին:

Ինչպես տեսնում ենք, զորքերի բոլոր տեսակներն իրենց գործողություններն անց են կացնում յելնելով մի ընդհանուր նպատակից — թեթևացնել հետևակի գործը՝ նրա հիմնական խնդրի կատարման համար:

Կռիվը վարելու արագությունն ուղղակի կախումն ունի հետևակի հարձակման արագությունից և աջողությունից, այսինքն՝ թե վորքան համարձակ ու վճռական են նրա ռազմիկների գործողությունները:

Բացի դրանից, կռվի արագությունը և հաջողությունը կախված են զորքերի մյուս տեսակների ռազմիկների խելացի գործողություններից:

Չե՞ վոր հարձակվող հետևակը կարող է հաջողությամբ առաջ շարժվել միայն այն դեպքում, յերբ գնդացիրը և հրետանին հաջող կրակով կճնշեն թշնամու կրակը և մեծ կորուստներ կպատճառեն նրան:

Առաջխաղացման այդ հաջողությունն էլ ավելի դյուրին կծավալվի, յերբ տանկաները շարժվելով իրենց հետևակի առաջից, իրենց թնդանոթների կրակով կվոչնչացնեն թշնամու գնդացիրները, կճնշեն նրա կրակի օջախները, կքանդեն արհեստական պատնեշները, վոր հանդիպում են հետևակի շարժման ճամբին:

Այլ կերպ ասած, կռվի ժամանակ խնդիրների հաջող կատարումը կախված է նրանից, թե ամեն մի կարմիր – բանակային կռվելիս վո՛ր չափով է գիտակցորեն խելացի գործում, այսինքն՝ թե վո՛ր չափով է նախաձեռնությամբ յուրացրել յուր դերը և վորոշել իր տեղը ռազմական պայմաններում: Միայն այն կարմիր բանակայինը, վորը ճշտորեն է յուրացրել խնդիրը, սովորել է յուր գործողությունները կապակցելու ձեռքի և դազգյահի գնդացիրների աշխատանքի հետ, յուրացրել է հրետանու աշխատանքը, վորը նրան աջակցում է,– միայն այդ կարմիր – բանակայինը կարող է լիովին հուսալ կռվի հաջող ընթացքի մասին:

Մանյովրները պետք է դրսևորեն տաքտիկապես գրագետ ռազմիկին, վորը միանգամայն հասկանում է իր հարևանների – գնդացիր արձակողների, հրետաձիգների, խմբիկների և մյուսների ռազմական գործողությունների ձևը:

ԿԱՐՄԻՐ – ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ. ՀԱՆՈՒՆ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԶՈՐՔԵՐԻ ՄԻԱՀԱՄՈՒՌ, ՄԻԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՆՅՈՎՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ:

ՀԱՆՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅԱՆ, ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ:

### «ՈՒԺԵՂ ԿԱՄՔՈՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ» ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր կարմիր–բանակային միշտ պետք է շատ լավ հիշի, վոր նրա համարձակությունը, նախաձեռնությունը հաջող գործողությունների գրավական են հանդիսանում:



Ապագա կռիվները տեխնիկայի ժամանակակից զարգացման պայմաններում տարվելու յեն վոչ միայն ճակատից և փլանգից, այլև թիկունքից, վոչ միայն ցերեկը, այլև գիշերը: Դրա համար էլ ինչպես առանձին յենթաողակները, այնպես էլ առանձին ողակները պատրաստ պետք է լինեն կռիվ տալու ամեն ժամանակ, ամեն ուղղությամբ: Թիկունքում հակառակորդի յերևալը չպետք է ազդի ռազմիկի բարոյական վիճակի վրա: Համարձակ, անվախ կարմիր–բանակայինի համար պանիկան օտար է:

Հետևակային շարքերի և կարգերի լայն բաժանումները ժամանակակից մարտի ժամանակ վոչ միշտ են հնարավորություն տալիս հրամանատարին անմիջականորեն ղեկավարել իր ռազմիկներին:

Այդ դրությունը հատուկ նշանակություն ունի կռիվը լեռնային պայմաններում տանելիս: Լեռնային ռելյեֆի առանձնահատկությունը, ինչպես օրինակ, Կովկասում — կիրճեր, շավիղներ և այլն — ռազմիկին մաքսիմում ինքնագործունեություն են ընձեռնում, վորովհետև ողակի կամ դասակի հրամանատարը ի վիճակի չե տեսնել իր ստորադրյալներին յերկարատև ժամանակամիջոցում:

Ահա այստեղ էլ անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կարմիր–բանակային իրեն դաստիարակի այնպես, վորպեսզի նա կարողանա ինքնուրույն կերպով, առանց հրամանի սպասելու կռիվ տալ:

Համարձակ, ինքնուրույն գործողություններ կատարելը — լեռնային պայմաններում կռիվ վարելու հիմքերից մեկն է:

Հարկավոր է միանգամ ընդմիշտ վերջ տալ դանդաղկոտությանը, քնքշությանը, օրինակ լինելու վախկոտությանը, պատասխանատվության վախին:

Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները, հրամանատարական կազմը և հենց իրենք՝ կարմիր – բանակայինները — պարտավոր են ամեն



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ–Арм ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
6398-67

տեսակի աջակցություն ցույց տալ ռազմիկի այդ կենդանի կամային հատկությունների զարգացմանը:

Այստեղ լայն չափով ծավալված պիտի լինի սոցմրցակցության և հարվածայնության աշխատանքը:

Կարմիր-բանակայիններ· մանյովրների ժամանակ պարզ ու արագորեն կատարեցեք հրամանները, համարձակ ինքնուրույն գործողություններ և ինքնագործունեություն ցուցաբերեք:

Պայքար թափթփվածության, դանդաղկոտության, գլուխ կորցնելու յերևույթների:

Մանյովրների ժամանակ «ինքնուրույն կամքի կարմիր-բանակայիններ» պիտի առաջ քաշվեն:

## ԿՐԱԿԸ ՅԵՎ ՇԱՐԺՈՒՄԸ — ԿՌՎԻ ՀԻՄՔՆ ԵՆ

Հետևակի հարձակումը պահանջում է մեծ քաջություն:

Հարձակման ժամանակ ռազմիկն ինքնուրույն կերպով տեղ է ընտրում իր համար, վորտեղից նրան հարմար է կրակ բանալ հակառակորդի վրա և ծածկվել վերջինի աչքից:

ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՀԱՐՁԱԿՎԵԼ ԱՐԱԳ, ՎՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼՈՒ ՀԵՏ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՐԱԿՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂԱՆԱԼՈՒ ՅԵ:

Շարժման ժամանակ անպայման պետք է հարմարվել տեղին, ոգտագործելով բոլոր տեսակի բարձրությունները և ծածկոցները, ինչպես, օրինակ, անդունդը, կանավը, փոսը, բլրակը, քարը, վոր լեռնային պայմաններում շատ հեշտ է գործադրել:

Տակտիկական ուսմունքի և մանյովրների ժամանակ մենք կրակ ենք բացում կեղծ գնդակներով, վորից ռազմիկի կյանքին անմիջական վտանգ չի սպառնում: Մարտական պայմաններում, կռվի ժամանակ տեղին վատ հարմարվելու պատճառով կարելի յե շատ զոհեր տալ: ԴՐԱ ՀԱՄԱՐ ԵԼ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՏԵՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ



ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԴԵՌ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՀԱՐԳԱՆՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ:

Հրաձգային դիրքեր գրավելիս ռազմիկի տեղից տեղ անցնելու տեխնիկան ևս թերություններ է ունեցել. ռազմիկը հաշվի չառնելով գնդացիրային կրակի կործանարարությունը յերկար տեղափոխություններ (перебежки) է կատարել, չօգտագործելով տեղի բոլոր անհարթությունները, վոր գտնվում են շարժման ճամբին: Կանգ առնելու ժամանակ ռազմիկի ընկերը— բահը, հաճախ մոռացվել է, այնինչ հետևակի ժամանակակից կրակի պայմաններում յուրաքանչյուր նոր հրաձիգային դիրքը կարելի կլինի լավ ոգտագործել միայն այն ժամանակ, յերբ ռազմիկն այդ դիրքից իր կրակով հարվածներ է հասցնում հակառակորդին և հենց դրանով նպաստում իր հարևանի առաջխաղացմանը:

ԹՇՆԱՄՈՒ ՎՐԱ ՀԱՋՈՂ ՈՒ ՏԵՂԻՆ ԿՐԱԿ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԲԱՆԱԼ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ՅԵՐԲ ԻՆՔԸ ՀՐԱՁԻԳԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ Ե ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՐԱԿԻՑ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՅԵՐԲ ՏԵՂԸ ԼԱՎ Ե ՈԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ:

Հարձակման ժամանակ կարմիր – բանակայինը չպիտի նայի հարևանների վրա: Հարկավոր է մոռանալ դեռ չվերացված յերևույթը — հարևանի արմունկի մոտիկությունը, այսինքն՝ յերբ ռազմիկը հավասարվում է իր հարևանին: Անհրաժեշտ է հիշել, վոր մեր ռազմի բաժան-բաժան շարքերի և կարգերի պայմաններում հարևանին հարմարվելու սովորությունը միանգամայն անթույլատրելի յե:

Յեթե ուղղակի հրամանատարը տեսնում է, վոր հարևան ոջակները գտնվում են հակառակորդի կրատարեր կրակի տակ, նրա պարտականությունն է արագորեն առաջ շարժել իր ոջակը, վորպեսզի դուրս գա հակառակորդի զորաթևի կողմը կամ էլ թևի կրակ բանալ հակառակորդի այն խմբի վրա, վորը գնդակոծում է հարևանին:

Հաճախ դեպքեր են յեղել, յերբ լեռներում հարձակման ժամանակ յենթառողակները մի փոքրիկ բարձունք գրավելիս թշնամու դիմացից են հարվածներ տվել: Աշխատիր բարձունքը գրավել թշնամուն հարվածելով թևից, հակառակ դեպքում մեծ կորուստներ կտաս:

Յեղիր կարգապահ հրաձիգ, մի հուզվիր, կրակ բացիր հանգիստ, համոզված:

Աշխատիր հրաձգությունը տանել հաստատակամ, իսկ յերբ հարկավոր լինի, ինչպես օրինակ՝ գրոհի անցնելիս — արագ, հրացանը ցած բռնած:

ՈՒՇԱԴԻՐ, ՏԵՂԻՆ ՆՇԱՆ ԲՌՆԻՐ, ԱՌԱՆՑ ՑՆՑԵԼՈՒ, ԲԱՑ ԹՈՂ ԲԼԹԱԿԸ ՅԵՎ ՀԵՏԵՎԻՐ ԳՆԴԱԿԸ ԿՊՉԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔԻՆ, ՎՈՐՊԵՍԶԻ ԿԱՐԵԼԻ ԼԻՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼ:

Յուրաքանչյուր կարմիր — բանակային պետք է ճիշտ կրակ բանալու սովորություն արմատավորի իր մեջ:

ՈՒՍՄՈՒՆՔԻ ՅԵՎ ՄԱՆՅՈՎՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԵՂԾ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ ՃԻՇՏ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՊԻ ՏԵՂԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ:

## ՀԵՏԵՎԻՐ ՌԱԶՄԻ ԴԱՇՏԻՆ

Հաջող առաջխաղացման ժամանակ միշտ խանգարելու յե հակառակորդի կրակը, հատկապես նրա գնդացիրները, վորոնք իզուր չեն հրաձգային կռվի հենարանն ու հիմքն ընդունվում: Նրանց կործանարար կրակը խեղդելու համար հարկավոր է սեփական գնդացիրի կամ հրետանու ոգնությամբ փնտրել և ցույց տալ հակառակորդի գնդացիրների տեղը:

Լեռնային պայմաններում, յերբ բազմաթիվ անհարթություններ կան — բարձունքներ, անդունդներ, լավ դիմակավորման ներկայությամբ, փնտրել հակառակորդի գնդացիրը — բավական դժվար խնդիր է:



Հաճախ գնդացիրները դրվում են գնդակոծելու համար լեռնանցքները, կիրճերը, վորոնք հարձակման համար հարմար տեղեր են, լեռնաշղթայի փեշերը գնդակոծելու համար. գնդացիրները կարելի յե գտնել նաև հակառակորդի դիրքի կողքերին և այլն:

Յենթառողակի ռազմիկների պարտականությունն է աշխատել գտնելու հակառակորդի գնդացիրի տեղը, վորը կրակ է բացում տվյալ յենթառողակի վրա:

Ամեն մի նկատված գնդացիր պետք է հաշվի առնվի, վորի մասին անհրաժեշտ է անմիջապես հայտնել հրամանատարին, մերձակա գնդացրաձիգին և յեթե մոտակայում է գտնվում՝ նաև հրետանու դիտողին:

Հարկավոր է արթուն, անդադար հսկողություն սահմանել կռվի դաշտի վրա, խնդիր դնելով — գտնելու և հետևելու հակառակորդի նպատակներին ու վորոշելու տարածությունը:

Վորքան հսկողությունն ուշադիր լինի, վորքան արագությամբ հրաձիգը գտնի թշնամու կրակի կետը, այնքան արագորեն կարելի յե նրան վոչնչացնել, այնքան հեշտ և աջողությամբ կարելի կլինի առաջ խաղալ: Յուրաքանչյուր կարմիր-բանակային ինքնուրույն կերպով պիտի հասկանա, թե յերբ և ինչ նպատակների համար պետք է կրակ բանալ:

Առանց կողմնակի ոգնության սովորեցեք արագ և ճշտությամբ աչքի չափով սահմանել տարածությունը մինչև նշանը և նշան բռնելու ճիշտ դրույթ վերցնել:

ԿԱՐՄԻՐ — ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ․ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՏԵՔ ԿՌՎԻՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԵՏԵՎԵԼՈՒ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

## ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՔ ԿԱՏԱՐԻՐ

Կռվի ժամանակ անհրաժեշտ է չափազանց խնայողաբար վերաբերվել փամփուշտների հաշվառքին:

Լեռնային կռվում հակառակորդը կարող է յերևալ այն ուղղությամբ, վորտեղից նրան չես սպասում. այն

ժամանակ վտանգավոր բոլեյին փամփուշտն անհաշիվ գործածելով՝ կարելի յե ծանր կացության մեջ ընկնել:

Յերբեք չպիտի իզուր գործածել փամփուշտը, յեթե հավատացած չես, վոր դրանով կարող ես նպատակիդ հասնել:

*Հրացանի կրակը թշնամուն սարսափելի յե միայն այն դեպքում, յերբ նա իսկական կրակ է, այսինքն՝ յերբ նա ընդունակ է կարճ ժամանակում մեծ կորուստներ պատճառել հակառակորդին: Ընդհակառակը, անվնաս կրակն անօգտակար կերպով փամփուշտներ է մսխում և ձգձգում հարձակումը, վորովհետև* վատ կրակը թշնամուն չի անհանգստացնում և նրան հավատ է ներշնչում, վոր իր դեմ գործում է թույլ վարժված մի զորամաս:

*Յուրաքանչյուր հրաձիգ կռվի ժամանակ պարտավոր է իր մոտ յեղած փամփուշտի հաշիվը պահել և սահմանված պաշարի կեսը մնալու այդ մասին հայտնել ողակի հրամանատարին: Դրա հետ միաժամանակ հարկավոր է, վոր ինքդ մտածես փամփուշտի պաշարը լրացնելու մասին, չսպասելով, վոր թիկունքից բերեն: Հարկավոր է հավաքել դեն գցած փամփուշտները, վերցնել սպանվածներից և վիրավորվելու պատճառով շարքից դուրս յեկողներից:*

*Փամփուշտ կրողները պետք է ամեն կերպ դիմակավորվեն և հակառակորդի ուշադրությունն իրենց վրա չդարձնեն:*

Պիտի հիշել, վոր փամփուշտ կրողի խելացի աշխատանքից է կախված կրակի դիրքերում գտնվող նրանց հրաձիգ ընկերների հանգիստ դրությունը: *Դանդաղկոտությունը, փամփուշտ հասցնելու ձգձգումները կազդեն ռազմիկների, յենթաողակի և ամբողջ զորամասի գործողությունների վրա:*

ԿԱՐՄԻՐ — ԲԱՆԱԿԱՅԻՆ․ ԿՌՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՓԱՄՓՈՒՇՏԻ ԽԻՍՏ ՀԱՇՎԱՌ ԿԱՏԱՐԻՐ: ՓԱՄՓՈՒՇՏ ԿՐՈՂ․ ՀԱՐՄԱՐՎԻՐ ՎԱՅՐԻՆ, ՊԱՀՊԱՆԻՐ ԴԻՄԱԿԱ-



ՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՍՑՆԵԼ ՓԱՄՓՈՒՇՏԸ ՔՈ ԸՆԿԵՐՈՋԸ:

## ՊԱՀՊԱՆԻՐ ՏԵԽՆԻԿԱՆ

*Վատ հրաձիգը — ռազմիկ չէ: Լավ հրացան ձգել կարող է ամեն մի կարմիր-բանակային, ով համառությամբ ուսումնասիրում է հրաձգային գործը: Միայն ամենօրյա, համառ աշխատանքը հրացանի հետ՝ լավ հրաձիգ է պատրաստում:*

*Սակայն մինչև անգամ լավ հրաձիգը չի կարող տեղին կրակել, յեթե նրա զենքը կարգին չէ: Այստեղից պարզ է, թե կռիվ անելու համար ինչ նշանակություն ունի զենքի և փամփուշտի լավ կացությունը: Յեթե առօրյա ուսմունքի ժամանակ այդ հարցին մենք բավականին ուշադրություն չենք դարձնում, ապա մանյովրների ժամանակ դրան հատուկ նշանակություն պիտի նվիրել:*

*Մանյովրներին զենքը պահպանելու համար այն պայմանները չենք ունենալու, ինչ վոր ունենք զորանոցային և ճամբարային պայմաններում: Հրաձիգը մանյովրների պայմաններում ռազմի ծառայություն է տանում ամբողջ օրերով ինչ յեղանակի ժամանակ էլ ուզում է լինի: Դեռ ավելին. ռազմական գործողությունները մանյովրների ժամանակ ընթանալու յեն լեռներում: Կատարելով ռազմական խնդիրը, հրաձիգը ստիպված է լինելու մի շարք բնական արգելքներ հաղթահարել, դժվարանցանելի տեղեր բարձրանալ ու իջնել, սողալ կիրճերում, անդունդներում և այլն: Դրա համար կարմիր-բանակայինի առաջին հոգսը պիտի լինի զենքը սարքին պահել:*

*Ջնայած մանյովրների ժամանակ ռազմական պայմանների ծանրությանը, հարկավոր է օգտվել ամեն հարմար առիթից՝ հրացանը գնդացիրը, թնդանոթը կարգի բերելու համար: Մանյովրները քննություն են լինելու, թե կարմիր-բանակայինները վո՞րքան են յու-*

բացրել և գիտակցել ռազմական տեխնիկայի նշանակությունը և բովանդակությունը:

ԿԱՐՈՂԱՑԻՐ ՏԻՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ, ԿԱՐՈՂԱՑԻՐ ՑԵՎ ՊԱՀՊԱՆԵԼ ՆՐԱՆ:

ԿԱՐՄԻՐ – ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ· ՄԱՆՑՈՎՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՎՈՉԻՆՉ ՉՊԻՏԻ ԿՈՏՐՎԻ, ՎՈՉԻՆՉ ՉՊԻՏԻ ԿՈՐՉԻ:

## ՁԻՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Մասի ռազմունակությունը մեծ չափով կախված է առողջ, հետևաբար և մարտունակ ձի ունենալուց:*

*Ի՞նչ է հարկավոր, վորպեսզի ձին աշխատունակ և մարտունակ լինի:*

*Ձիու առողջությունը մեծ մասամբ կախված է նրանից, թե վորքան ճիշտ է աշխատում կաշին: Կաշվի կացությունից և բրդի փայլից առանց սխալվելու կարելի յե դատել ձիու առողջության մասին:*

*Ձին մաքրելով կարելի յե կաշվի հիվանդությունների առաջն առնել:*

*Շատերը կարծում են, թե արշավի ժամանակ կարիք չկա ձին մաքրելու· դա ճիշտ չե: Անհրաժեշտ է ձին մաքրել ճիշտ այնպես, ինչպես այդ արվում է գոմում:*

*Լողացնելը կաշվի աշխատանքը թեթևացնող, մաքրող միջոց է հանդիսանում: Աշխատիր լավ յեղանակին ձին լողացնել: Տաքացած ձիուն և կերակրելուց անմիջապես հետո չլողացնել, ձին կարող է հիվանդանալ:*

*Ամեն անգամ կերակրելուց առաջ հարկավոր է լավ նայել վարսակին, հատկապես խոտը: Միանգամից շատ վարսակ մի տա: Վատ, բորբոսնած խոտը դեն շպրտի: Դրանով դու ձին հեռու կպահես լուրջ հիվան-*



*դությունից, վորից շատ քիչ ձիեր են առողջանում: Թորբան մաքուր պահիր, լավ լվացիր և չորացրու: Նա ժամանակից շուտ չի փչանա և ձիու կերն ավելի մաքուր կլինի:*

*Տաքացած ձիուն վարսակով մի կերակրի և ջուր մի տա, թույլ տուր չորանալ և հանդարտվել:*

*Միանգամից ցուրտ ջուր շատ մի տուր: Հարկավոր է ջուր տալ իր վեդրոյից և կամ գյուղից վերև գտնվող գետից: Խուսափիր բնակչության անասունների համար ընդհանուր ջրելու տեղից:*

*Շուտ-շուտ մաքրիր սմբակները կեղտից և հետևիր պայտերին, վորովհետև տեղը լեռնոտ է, ձին կարող է պայտը կորցնել, սմբակը կոտրել և դու կզրկվես քո ընկերոջից:*

*Ձին թամբելիս լավ նայիր մեջքին և ուսերին, թամբին և մյուս ձիասարքին — կեղտ չկա՞ նրանց վրա: Ձիու ուժերը չափիր աշխատանքի հետ, առանց կարիքի մի գործադրիր ձիու ուժերը: Վճռական րոպեյին ձին քեզ կփրկի: Խիստ շրջումներ մի արա· բարձր տեղեր բարձրանալիս և իջնելիս ձին քաշիր սանձից:*

*Ձիուց իջնելուց հետո նայիր պայտերը, չկա՞ն, արդյոք, քարի կտորներ, չի՞ թուլացել կամ շարժվել պայտը: Դարմանով մաքրիր վերջավորությունները· դրանով դու կամրացնես ձիու վոտքերը: Միանգամից թամբը մի վերցնի, վորքաշը բաց մի թողնի, ձիասարքը մի հանի, մինչև վոր ձին չչորանա և չհանգստանա: Թամբը վերցնելուց հետո տրորիր մեջքը, ուսերը:*

*Արշավի ժամանակ կամ դաշտերում ձիդ տեղական բնակչության ձիերից և անասուններից առանձին*



ՀՀ Ազգային գրադարան
NL0211074

41. 777

պահիր։ Իսկ յեթե սախպված ձին տեղավորում ես տեղական գոմերում, իմացիր՝ տվյալ գյուղում, բակում անասունների վարակիչ հիվանդություններ չկա՞ կամ չի՞ յեղել, արդյոք։ Յեթե կա, ձիդ առանձին կապիր, դրանով դու նրան վարակումից կազատես։

ԸՆԿԵՐ ԿԱՐՄԻՐ – ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ. սոցմրցակցության և հարվածայնության միջոցով ձիերին խնամելու և հսկելու օրինակելի աշխատանքներ ցույց տվեք։

---

ՊԵՏ. ԿՍՆ. ԳՐ-ԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ИМ А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ